ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շողիկ Սուրենի Մեջլումյան
ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

Զբոսաշրջային հոսքերի աճի գնահատմամբ և դրա հետ կապված զբոսաշրջային շուկայի փոփոխությունների ուսումնասիրմամբ զբաղվում են տարբեր կազմակերպությունների մասնագետներ: Ուսումնասիրությունները կատարվում են ազգային զբոսաշրջային կազմակերպությունների, հասարակական միությունների կամ ուսումնական հաստատությունների կողմից: Ուսումնասիրությունների արդյունքները տպագրվում են վիճակագրական ժողովածուներում, մասնագիտական լրագրերում և պարբերականներում:

1975թ. ստեղծվեց Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը (ԶՀԿ), որը 2016թ. միավորում էր 164 երկիր[1], և գլխավոր նպատակը զբոսաշրջության խրախուսումն ու օժանդակումն է՝ որպես տնտեսական զարգացման, խաղաղության պահպանման, կենսամակարդակի բարձրացման, մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում զարգացող երկրների շահերի պաշտպանության միջոցի[2]:

Միջազգային զբոսաշրջության առկա վիճակի մասին հավաստի տեղեկատվության աղբյուր են ԶՀԿ-ի կողմից ամեն տարի հրապարակվող “The Compendium of Tourism Statistics”[3], ինչպես նաև “Yearbook of Tourism Statistics”[4]: ԶՀԿ-ն հրապարակում է նաև տարեկան հաշվետվություն՝ “International Tourism Highlights”[5] վերնագրով, որտեղ ներկայացնում է տվյալ տարվա զբոսաշրջային վիճակագրությունը՝ համապատասխան վերլուծություններով: Այս կազմակերպությունը ներկայացնում է զբոսաշրջության ոլորտի կանխատեսումներին վերաբերող հրատարակություններ՝ “Tourism Towards 2030 / Global Overview” և այլն, որտեղ ներկայացված են ԶՀԿ-ի մարքեթինքային ռազմավարական ծրագրերը, զբոսաշրջության ոլորտի հիմնական միտումների կանխատեսումները:

---

[1] http://www.wto.org/english/thewto_e/whatis_e/tif_e/org6_e.htm .

[2] **Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ.** «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մաս I, Երևան, 2012, էջ 640, 477էջ:

[3] https://statistics.unwto.org/en/node/27364 .

[4] https://statistics.unwto.org/en/node/36603 .

[5] https://www.e-unwto.org/doi/book/10.18111/9789284421152 .

Տարածաշրջանային զբոսաշրջային կազմակերպությունները, ինչպիսիք են “OECD”(The Organisation for Economic Co-operation and Development) և “PATA” (Pacific Asia Travel Association) նույնպես հրատարակում են իրենց վիճակագրական ժողովածուները: Եվրոպայում զբոսաշրջության ոլորտի վերլուծություններով զբաղվում է European Travel Commission-ը իր տարեկան հրապարակումներով (European Tourism: Trends & Prospects): Եվրոպական տարածաշրջանի վերաբերյալ տեղեկություններ ներկայացվում են նաև “Eurostat regional yearbook”-ում:

Զբոսաշրջային վիճակագրության հանրաճանաչ աղբյուրներից է Զբոսաշրջության գծով փորձագետ-գիտնականների միջազգային կազմակերպության (International Association of Sientific Experts in Tourism - AIEST) “The Tourist Review” պարբերական հրատարակությունն է:

Զբոսաշրջության ոլորտի համար կարևոր նշանակություն ունի նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող “Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության զեկույցը” (World Economic Forum Travel and Tourism Competitiveness Report), որը ներկայացվում է երկու տարին մեկ անգամ՝ ամփոփելով 140 երկրի զբոսաշրջության ոլորտը մրցունակության 14 հենասյուներով: Զեկույցում ներկայացվում է անապարհորդության և զբոսաշրջության մրցունակության համաթիվը (Travel and Tourism Competitiveness Index (TTCI)) (այսուհետ՝ ՃԶՄՀ), որը ձևավորվում է գործոնների ու քաղաքականությունների չափումների միջոցով և տարբեր երկրներում զարգացման հնարավորություններ է առաջարկում զբոսաշրջության և ճանապարհորդության ոլորտների զարգացման համար[1]:

Եթե զբոսաշրջության զարգացման տեմպերը դիտարկենք երկարաժամկետ կտրվածքով, ապա կտեսնենք, որ աշխարհում զբոսաշրջային այցելությունները շարունակում էին աճել 1950թ. 25 մլն ցուցանիշից մինչև 1980թ. 277 մլն-ը, այնուհետև 1990թ. 438 մլն-ից մինչև 2000թ. 677 մլն-ը[2]՝ հասնելով մինչև 2008թ. 936 մլն-ի սահմանագիծը: 2008թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև բռնկված A (H1N1) գրիպի համաճարակը իր ազդեցությունն ունեցան միջազգային զբոսաշրջության վրա: Այս փուլում ամենալուրջ անկումը գրանցվել է Եվրոպայում՝ 5.7%: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում զբոսաշրջային հոսքերը նվազեցին աշխարհի բոլոր տարածաշրջաններում՝ բացառությամբ Աֆրիկայի, որտեղ կայուն աճը շարունակվեց նույնիսկ ճգնաժամային պայմաններում:

---

[1] The Travel & Tourism Competitiveness Report 2019, Travel and Tourism at a Tipping Point, http://www3.weforum.org/docs/WEF_TTCR_2019.pdf .

[2] Contemporary Tourists, Tourist Behaviour and Flows, p. 48.



Գծապատկեր 1. Միջազգային զբոսաշրջային ժամանումներ[1] (մլն մարդ), փոփոխությունը նախորդ տարվա համեմատ (%)

Այս ամենի արդյունքում, 2008 թվականի համեմատ 2009թ. զբոսաշրջային այցելությունները նվազեցին 4.2%-ով՝ կազմելով 897 մլն մարդ, իսկ 2010թ. այս ցուցանիշը աճեց 6.6%-ով՝ հասնելով 956 մլն մարդու[2]: 2012 թվականին զբոսաշրջային ժամանումների թիվն առաջին անգամ հատել է 1 մլրդ-ի սահմանը, իսկ արդեն 2018 թվականին ավելացել է 33%-ով՝ կազմելով 1.4 մլրդ մարդ:

Զբոսաշրջության ոլորտի հիմնական բնութագրիչներից մեկը տարբեր երկրներում և տարածաշրջաններում միջազգային զբոսաշրջային հոսքերի անհավասարաչափ բաշխումն է: Զբոսաշրջային հոսքերը կենտրոնացված են երկրագնդի մի քանի տարածաշրջաններում, իսկ նրանց տեղաշարժը հիմնականում ունի միջտարածաշրջանային բնույթ:

Միջազգային զբոսաշրջային ժամանումների ամենամեծ տարածաշրջանը շարունակում է մնալ Եվրոպան (51%), որտեղ բացարձակ ժամանումների թիվը 2018թ. կազմել է 710 մլն մարդ: Ասիայի և Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանի երկրներում արձանագրված 348 մլն միջազգային ժամանումները արդյունք են իրականացվող քաղաքականությունների, որոնք խթանում են միջտարածաշրջանային համագործակցությունը և համակարգումը զբոսաշրջության մեջ:

[1] https://data.worldbank.org/indicator/st.int.arvl .
[2] UNWTO Tourism Highlights, 2019 Edition, p.14.



Գծապատկեր 2. Միջազգային զբոսաշրջային ժամանումներ, 2018թ.[1]

2018 թվականի Կորեայի Հանրապետության Փեհենչհան քաղաքում տեղի են ունեցել ձմեռային օլիմպիական խաղերը, ինչը մեծապես խթանեց Ասիայի զբոսաշրջային գրավչությունը: Բացի այդ, Ճապոնիան, երրորդ ամենամեծ զբոսաշրջային ուղղությունն է Ասիայում, որտեղ ժամանումների թիվը կազմել է 30 մլն մարդ, իսկ եկամուտները հասել են 7 մլրդ ԱՄՆ դոլարի: Ընդ որում, 2020 թվականին Տոկիոյում տեղի ունեցող Ամառային օլիմպիական խաղերը նոր հնարավորություն են ճապոնական զբոսաշրջության համար: Աֆրիկյան տարածաշրջանը հասել է տարեկան 68 մլն զբոսաշրջիկի, Հարավային և Հյուսիսային Ամերիկայում ժամանումների թիվը 2018 թվականին հասել է 216 մլն մարդու:

Համաձայն ՁՀԿ-ի վերլուծությունների՝ 2018թ. զբոսաշրջային գրավչությամբ առաջին երկիրը Ֆրանսիան է (89 մլն ժամանում): Ընդ որում, 2018թ. Ֆրանսիա և Իսպանիա այցելած զբոսաշրջիկները կազմել են Եվրոպա այցելած զբոսաշրջիկների 24%-ը: Իսկ 3-րդ և 4-րդ հորիզոնականներում ԱՄՆ և Չինաստանն են, որոնք 2018թ. ընթացքում ընդունել են համապատասխանաբար 80 մլն և 63 մլն զբոսաշրջիկ[2]: Զբոսաշրջային ծառայությունների մատուցմամբ այս երկրներն աշխարհում տարիներ շարունակ առաջատար դիրքերում են հաշվի առնելով մի շարք գործոններ: Առաջին հերթին, իհարկե, երկրների հիմնական մասը աշխարհագրական և բնակլիմայական բարենպաստ դիրքերում է, ինչի շնորհիվ զբոսաշրջային տարածքները բավական շատ են: Բացի այդ, երկրներին միավորում է պատմշակութային ժառանգության առկայությունը, ինչպես նաև դրանց պահպանմանն ուղղված մեծ ջանքերը: Զբոսաշրջային գրավչություն ունեցող

[1] https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284421152 .
[2] https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284421152 .

երկրներում բարձր մակարդակի վրա է նաև մատուցվող ծառայությունների որակը, ինչը զբոսաշրջիկների ներգրավվման կարևոր պայմաններից է:

Զբոսաշրջության համար առաջնային նշանակություն ունի զբոսաշրջային մուտքերի ուսումնասիրությունը: Այցելուների ծախսերը բնակարանների, ուտելիքի և խմիչքի, տեղական տրանսպորտի, զվարճությունների և գնումների վրա կարևոր բաղադրիչ են ցանկացած տնտեսության համար՝ ստեղծելով կարևոր նշանակություն ունեցող աշխատատեղեր և զարգացման հնարավորություններ:

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ 1995-2017թթ. ընթացքում միջազգային զբոսաշրջային եկամուտների աճի տեմպը կազմել է 5.8%: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում ամենամեծ անկումը գրանցվել է 2001թ. (19%՝ նախորդ տարվա համեմատ)՝ պայմանավորված ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններով: Զբոսաշրջային եկամուտների հաջորդ անկումը արձարագրվել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում՝ մոտ 10%-ով:

2018 թ. միջազգային զբոսաշրջային եկամուտները կազմել են 1.5 տրլն ԱՄՆ դոլար, ինչը 121 մլրդ ԱՄՆ դոլարով ավել է 2017 թվականին արձանագրված արդյունքից[1]: Ընդ որում, զբոսաշրջային ամենաշատ եկամուտներ ունեցող երկիրն ԱՄՆ-ն է, որտեղ 2018 թվականի ընդհանուր զբոսաշրջային եկամուտների 8%-ն է արձանագրվել (214 մլրդ ԱՄՆ դոլար): Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ 2018 թվականին զբոսաշրջային ամենամեծ եկամուտ ունեցող առաջին տասը երկրների արդյունքը կազմում է ընդհանուր զբոսաշրջային եկամուտների 50%-ը:



Գծապատկեր 3. Միջազգային զբոսաշրջային եկամուտները 1995-2018թթ., մլրդ ԱՄՆ դոլար[2]

[1] https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284421152 .

[2] https://data.worldbank.org/indicator/ST.INT.RCPT.CD .

Եթե դիտարկենք ըստ տարածաշրջանների, Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում զբոսաշրջային եկամուտների աճը 2018 թվականին նախորդ տարվա համեմատ կազմել է 7%՝ հասնելով՝ 435 մլրդ ԱՄՆ դոլարի: Ընդ որում, ինչպես զբոսաշրջիկների թվով, այնպես էլ զբոսաշրջային եկամուտների աճով երկնիշ ցուցանիշներ են արձանագրվել Հարավային Ասիայի երկրներում (Իրան, Նեպալ, Շրի Լանկա, Հնդկաստան): Ամերիկյան երկու մայրցամաքներում 2018 թվականին միջազգային զբոսաշրջային եկամուտները կազմել են 334 մլրդ ԱՄՆ դոլար, որի 64%-ը բաժին է հասնում ԱՄՆ-ին:

Աֆրիկյան տարածաշրջանում 2017 թվականի համեմատ զբոսաշրջային եկամուտները 2018 թվականին ավելացել են 2%-ով՝ կազմելով 38 մլրդ ԱՄՆ դոլար: Աֆրիկյան երկրները զբոսաշրջային ոլորտի բարեփոխումների ընթացիկ փուլում են՝ բարելավելով երկրներում անվտանգության մակարդակը, ինչպես նաև ընդլայնելով օդային հաղորդակցման ուղիները: Միջին Արևելքում 2018 թվակակին զբոսաշրջային եկամուտները կազմել են 73 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ ավելացել է 4%-ով:

2018 թվականին միջազգային զբոսաշրջության կեսը բաժին է ընկնում արձակուրդներին, ռեկրեացիոն զբոսաշրջությանը և ազատ ժամանցին (56%): Միջազգային զբոսաշրջիկների 13%-ը ճանապարհորդում է բիզնեսի և մասնագիտական հմտությունների ձեռքբերման համար, իսկ 27%-ին բաժին է ընկնում զբոսաշրջության այլ տեսակներ՝ ներառյալ՝ այցելություն ընկերներին և բարեկամներին: Իսկ զբոսաշրջիկների 4%-ի այցելությունները տեսակավորված չեն[1]:

2018թ. զբոսաշրջիկների կեսից ավելին՝ 58%-ը, իրենց այցելությունները իրականացրել են օդային ճանապարհով, իսկ մնացած 42-ին բաժին է ընկնում ցամաքային տրանսպորտին այդ թվում՝ ավտոմոբիլային տրանսպորտին՝ 37%, երկաթուղային տրանսպորտին՝ 2%, իր ջրային՝ 4%:

Համաձայն ՁՀԿ-ի կողմից իրականացվող կանխատեսումների՝ օդային տրանսպորտի գները 2020-2030թթ. ընթացքում կաճեն տարեկան 1.1%: Իսկ ցամաքային տրանսպորտի գների արժեքը կշարունակի աճել ավելի արագ տեմպերով, քան օդային տրանսպորտի գները: 2024թ.-ից սկսած գների աճը շատ ավելի զգալի կդառնա: Հիմնական աճի միտումները դրսևորվելու են ավտոմոբիլային տրանսպորտում, իսկ որպես աճի պատճառներ նշվում են հիմնականում բենզինի գների աճը: Որպես օդային տրանսպորտի գների աճի պատճառ ևս նշվում է վառելիքի գների աճը՝ որը արդյունք է նավթային գների աճի (նավթը սահմանափակ ռեսուրս է) և ավիացիոն վառելիքի հարկման ավելացման: Իսկ ընդհանուր միջազգային տրանսպորտի գների տարեկան աճը կկազմի 1.4 % 2020-2030 թթ. ընթացքում:

[1] UNWTO Tourism Highlights, 2019 Edition, p. 7.

Կարևոր է ուսումնասիրել նաև միջազգային զբոսաշրջության ոլորտում առկա միտումները և նախընտրելի ուղղությունները: ԶՀԿ-ի կողմից արված կանխատեսումները լավատեսական են զարգացող երկրների համար: Նախատեսվում է, որ զարգացող երկրներում ժամանումների աճը նախատեսվում է կրկնակի տեմպերով՝ տարեկան 4.4%՝ ի տարբերություն զարգացած երկրների 2.2%-ի: Բացարձակ թվերով զարգացող երկրներում միջազգային ժամանումների թվի աճը կազմելու է տարեկան միջինը 30 մլն մարդ՝ ի տաբերություն զարգացած երկրների՝ 14 մլն մարդու:

Զբոսաշրջության աճի նման տեմպերը մի շարք պատճառներ ունի, որոնցից կարևորագույնը ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումն է: Արհեստական բանականության զարգացմանը զուգահեռ փոխակերպվում են նաև մատուցվող զբոսաշրջային ծառայությունները վիրտուալ օգնականների ներդրման շնորհիվ: Մյուս կողմից էականորեն ավելացել են էլեկտրոնային վիզաներն ու ժամանման վայրում տրամադրվող վիզաները, իսկ ավանդական վիզաները գնալով կորցնում են իրենց արդիականությունը: Զբոսաշրջային ծառայությունների մատուցման նման հեշտացված ընթացակարգերը դրանք դարձնում են մատչելի և ռեսուրսախնայող:

Զբոսաշրջությունը, մի կողմից, ճգնաժամային իրավիճակներում կայունության բավական բարձր աստիճան է դրսևորում, պայմանավորված ոլորտի իներցիոն բնույթով: Զբոսաշրջային ծառայությունների պարագայում առաջարկի ու պահանջարկի փոփոխությունները բավական դժվար են արձանագրվում: Մյուս կողմից, զբոսաշրջային գործունեության վրա անմիջապես ազդում են այդ ոլորտի ներկայացուցիչների վերահսկմանը չենթարկվող մի շարք գործոններ՝ ահաբեկչություններ, փոփոխություններ քաղաքական դաշտում, զանգվածային հիվանդությունների, կլիմայական փոփոխությունների, փոխարժեքային տատանումների մասին բացասական տեղեկատվությունը և այլն:

Այսպիսով, միջազգային զբոսաշրջային շուկան երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հզոր ուժ է, ինչը խթանում է երկրում արտարժույթի ներհոսքը, զբաղվածության մակարդակի աճը, ավելացնում է երկրի բարեկեցության մակարդակը: Ի շնորհիվ ուժեղ մուլտիպլիկատիվ էֆեկտի զբոսաշրջությունը հանգեցնում է տրանսպորտային և կապի ենթակառուցվածքի, գյուղատնտեսության և առևտրի զարգացմանը: Ընդհանուր առմամբ, միջազգային զբոսաշրջության ինդուստրիան հանդես է գալիս որպես բավական բարդ համակարգ: Միևնույն ժամանակ, զբոսաշրջության ոլորտը կարևոր ցուցանիշ է, որով հնարավոր է գնահատել ազգային տնտեսության զարգացման աստիճանը: Զբոսաշրջային ինդուստրիան և դրա զարգացումը պայմանավորում են ընդհանուր տնտեսական խնդիրների լուծումը՝ կապված եկամուտների ավելացման և

բնակչության զբաղվածության հետ՝ ապահովելով տնտեսության համապատասխան հատվածների դինամիկ զարգացումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շողիկ Սուրենի Մեջլումյան
ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության հզոր ինդուստրիա է, որը վերջին տարիներին աճի արագընթաց միտումների շնորհիվ հարյուրամյակի ֆենոմեն է դարձել: Նրա արագընթաց աճին ու զարգացմանը նպաստում են պետությունների ու ազգերի միջև քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային կապերի ընդլայնումը: Զբոսաշրջային հոսքերի ընդլայնման շնորհիվ զբոսաշրջային արդյունքի օգտագործումը երկրների տնտեսությունների համար զարգացման հնարավորություններ ստեղծելու հեռանկարային ոլորտներից է: Այս համատեքստում արդիական է դառնում զբոսաշրջային հոսքերի, դրանց արդյունքում առաջացած զբոսաշրջային եկամուտների վերլուծությունը:

Բանալի բառեր՝ զբոսաշրջային հոսքեր, զբոսաշրջային գրավչության կենտրոններ, միջազգային զբոսաշրջային ժամանումներ, միջազգային զբոսաշրջային եկամուտներ, զբոսաշրջություն և ենթակառուցվածքներ:

КОМПЛЕКСНЫЙ АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОГО ТУРИСТИЧЕСКОГО РЫНКА

Шогик Суреновна Меджлумян
Аспирант кафедры Экономики и международных
экономических отношений ЕГУ

Аннотация

Туризм – мощная индустрия мировой экономики, которая, благодаря стремительным тенденциям роста последних лет, стала феноменом столетия. Его стремительному росту и развитию способствуют расширение политических, экономических, научных и культурных связей между государствами и нациями. Благодаря расширению туристических потоков, использование туристического продукта является одной из перспективных сфер для создания возможностей для развития экономик стран. В этом контексте актуальным становится анализ туристических потоков, и возникших от этих потоков туристических доходов.

Ключевые слова: туристические потоки, центры туристической привлекательности, международные туристические прибытия, международные туристические доходы, туризм и инфраструктура.

COMPREHENSIVE ANALYSIS OF THE INTERNATIONAL TOURISM MARKET

Shoghik Suren Mejlumyan
PhD Student of the Department of Economics
and International economic relations YSU

Abstract

Tourism is a powerful industry of the world economy, which due to the rapid growth trends of recent years has become a phenomenon of the century. Rapid growth and development of tourism is facilitated by the expansion of political, economic, scientific and cultural ties between countries. Thanks to the expansion of tourist flows, the use of tourism product is one of the promising areas for creating opportunities for the development of economies. In this context, the analysis of tourist flows and tourism revenues arising from these flows becomes relevant.

Keywords: tourist flows, tourist attraction centers, international tourist arrivals, international tourist revenues, tourism and infrastructure.